



ԱՎԴԴ/0008/11/20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
Նախագահող դատավոր՝ Կ.Մարդանյան

19 հուլիսի 2024 թվական

ք. Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ նաև Վճռաբեկ
դատարան),

նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ
Ս.ՕՀԱՆՅԱՆԻ

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝
2021 թվականի սեպտեմբերի 29-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ
Ա.Աֆանդյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության
ճանապարհապարեկային ծառայության 2-րդ սպայական գումարտակի 1-ին
սպայական վաշտի ճանապարհատրանսպորտային պատահարների գործերով

հետաքննության և վարչական վարույթի իրականացման խմբի տեսուչ Ա.Սաղոյանի՝ 2020 թվականի օգոստոսի 3-ի որոշմամբ դիմող Բելլա Երանոսյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է, և Աշոտ Գյուրջյանի նկատմամբ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ նաև ՀՀ քրեական օրենսգիրք) 185-րդ, 186-րդ հոդվածներով, 242-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդում չի իրականացվել՝ վերջինիս արարքում հանցակազմի բացակայության հիմքով:

Արարատի մարզի դատախազ Ա.Զիչոյանի՝ 2020 թվականի օգոստոսի 21-ի որոշմամբ դիմող Բ.Երանոսյանի բողոքը մերժվել է, և հաստատվել քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2020 թվականի օգոստոսի 3-ի որոշման օրինականությունը:

2. Վերոնշյալ որոշումների դեմ դիմող Բ.Երանոսյանը բողոք է ներկայացրել Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ խնդրելով վերացնել իր և Ա.Մարտիրոսյանի իրավունքների ու օրինական շահերի խախտումը:

3. Առաջին ատյանի դատարանը 2021 թվականի մարտի 3-ի որոշմամբ դիմող Բ.Երանոսյանի բողոքը բավարարել է՝ վերացնելով քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2020 թվականի օգոստոսի 3-ի և դատախազի՝ 2020 թվականի օգոստոսի 21-ի որոշումները:

Արարատի մարզի դատախազության ավագ դատախազ Հ.Սարգսյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2021 թվականի սեպտեմբերի 29-ի որոշմամբ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի՝ 2021 թվականի մարտի 3-ի որոշումը:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Աֆանդյանը վճռաբեկ բողոք է ներկայացրել, որը Վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի փետրվարի 22-ի որոշմամբ ընդունվել է վարույթ¹:

¹ Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող 483-րդ հոդվածի 8-րդ մասի՝ սույն բողոքը քննվում է մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

Վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի ապրիլի 14-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

5. Բողոքաբերը, վկայակոչելով մի շարք իրավանորմեր, Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներ, նշել է, որ ստորադաս դատարանները թույլ են տվել դատական սխալ՝ դատավարական իրավունքի այնպիսի խախտում, որն ազդել է գործի ելքի վրա: Մասնավորապես, ըստ բողոքաբերի՝ ստորադաս դատարանները պատշաճ իրավական գնահատականի չեն արժանացրել այն, որ վիճարկվող որոշման դեմ ներկայացված բողոքով հայցվող իրավական պաշտպանության առարկան քաղաքացիական իրավանորմերի գործադրմամբ լուծման ենթակա հարցեր են, և դրանք վերաբերել են Բ.Երանոսյանի և Ա.Գյուրջյանի միջև առկա քաղաքացիաիրավական հարաբերություններին:

Բողոքաբերը փաստարկել է, որ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված հանցակազմերի բացակայության պարագայում ճանապարհատրանսպորտային պատահարի արդյունքում պատճառված վնասների հետ կապված հարցերը կարգավորվում են քաղաքացիական իրավահարաբերությունների տիրույթում:

Հետևաբար, բողոքի հեղինակը եզրահանգել է, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից Բ.Երանոսյանի հաղորդման առթիվ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն իրականացրած չլինելու և դիմող Բ.Երանոսյանի իրավունքների խախտում թույլ տված լինելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր չեն:

6. Վերոգրյալի հիման վրա, բողոքաբերը խնդրել է բեկանել ու փոփոխել ստորադաս դատարանների դատական ակտերը և մերժել դիմող Բ.Երանոսյանի բողոքը:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

7. Բելլա Երանոսյանի հաղորդման համաձայն՝ 2020 թվականի ապրիլի 4-ին Արարատի մարզի Նոր Ուղի գյուղի բնակիչ Աշոտ Գյուրջյանը, 69 ՄՊ 999 հաշվառման համարանիշով «Նիսսան» մակնիշի ավտոմեքենայով Գինեվետ գյուղի դաշտամիջյան ճանապարհին մխրճվել է իրենց պատկանող ոչխարի հոտի մեջ, որի հետևանքով սատկել է 32 գլուխ մայր ոչխար, պարալիզացվել է 5 գլուխ ոչխար, նշված ոչխարներից 5 գլուխը եղել են հղի, որի հետևանքով իրենց պատճառով է 2.500.000 ՀՀ դրամի գույքային վնաս, ուստի խնդրել է հարուցել քրեական գործ՝ դեպքի հանգամանքները պարզելու և մեղավոր անձին քրեական պատասխանատվության ենթարկելու համար²:

7.1. Աշոտ Գյուրջյանը 2020 թվականի հուլիսի 27-ի բացատրությամբ հայտնել է, որ 2020 թվականի ապրիլի 4-ին՝ ժամը 20:25-ի սահմաններում, միայնակ, իր «Նիսսան» մակնիշի ավտոմեքենայով 60-70 կմ/ժ արագությամբ երթևեկել է Արարատի մարզի Նոր Կյանք գյուղի կողմից դեպի Արարատի մարզի Գինեվետ գյուղի ուղղությամբ: Ճանապարհը եղել է ասֆալտապատ և թաց, քանի որ տեղացել էր ուժեղ անձրև: 15-20 մետր հեռավորության վրա տեսել է մի ավտոմեքենա, որի վարորդն իր ավտոմեքենայի մոտակա և հեռավար լույսերը միացրել-անջատել է: Այդ ավտոմեքենան երթևեկել է իր գոտիով: Մի քանի մետր անցնելուց հետո իր համար անսպասելի իր երթևեկելի ուղեմաս՝ իրենից աջ հատվածից դուրս են եկել մեծաթիվ ոչխարներ: Ինքը փորձել է խուսափել վթարից, արգելակել է, սակայն չի կարողացել խուսափել և ավտոմեքենայի դիմացի հատվածով բախվել է հոտին: Հոտի անցկացման ժամանակ անվտանգության որևէ կանոն չի պահպանվել, որևէ ազդանշան, թարթող լուսարձակներ չեն եղել: Ինքն իրեն մեղավոր չի ճանաչել, քանի որ որևէ դիտավորություն չի ունեցել, ոչխարները անսպասելի են դուրս եկել ճանապարհ, բախումից խուսափելու հնարավորություն չի եղել, երբևէ որևէ խնդիրներ Արայիկ Մարտիրոսյանի և նրա ընտանիքի հետ չի ունեցել, որևէ

² Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթ 5:

դիտավորություն, մտադրություն չի ունեցել գույքային վնաս պատճառելու նրանց, եղել է սովորական ճանապարհատրասպորտային պատահար³:

7.2. 2020 թվականի հուլիսի 26-ին Բ.Երանոսյանը, իսկ 2020 թվականի հուլիսի 28-ին Ա.Մարտիրոսյանը հրաժարվել են բացատրություն տալ ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության ճանապարհապարեկային ծառայության 2-րդ սպայական գումարտակի 1-ին սպայական վաշտի ճանապարհատրանսպորտային պատահարների գործերով հետաքննության և վարչական վարույթի իրականացման խմբում՝ պատճառաբանելով, որ հաղորդումը ներկայացվել է ՀՀ ոստիկանության Արարատի բաժին և բացատրությունը կներկայացվի ոստիկանության Արարատի բաժնում⁴:

8. Քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2020 թվականի օգոստոսի 3-ի որոշմամբ արձանագրվել է հետևյալը. *«(...) Նկատի ունենալով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասը պարասիսանսպովություն է նախատեսում ավերամորիլի կամ մեխանիկական այլ տրանսպորտային միջոցի վարորդի կողմից ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելու համար, որը մարդու առողջությանն անգործությամբ պարճառել է ծանր կամ միջին ծանրության վնաս, իսկ այս պարագայում նշված ճանապարհատրանսպորտային պարահարում որևէ անձ մարմնական վնասվածք չի սրացել, հիվանդանոց բուժօգնության չի դիմել, ուստի նշված հանգամանքում Ա.Գյուրջյանի արարքում բացակայում են ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի հարկանիշները, որը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն քրեական հետապնդումը բացառող հանգամանք է, իսկ նյութերով քրեական գործ հարուցելն ենթակա է մերժման:*

Ինչ վերաբերում է Բ.Երանոսյանի կողմից Ոստիկանության Արարատի բաժնում տրված հաղորդման մեջ նշված այն հանգամանքին, թե ճանապարհատրանսպորտային պարահարի հետևանքով իրենց պարճառվել է

³ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 14-15:

⁴ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 11, 18:

2.500.000 ՀՀ դրամի գույքային վնաս, ապա նյութերի նախապարասարման ընթացքում պարզվել է, որ Ա.Գյուրջյանը իր կողմից վարած «Նիսսան» մակնիշի 69 MQ 999 հերթական համարանիշի ավտոմեքենայով դիտավորությամբ չի հարվածել ոչխարի հոտին և Բ.Երանոսյանին պատճառել գույքային վնաս, այլ գույքային վնասը պատճառվել է ճանապարհատրանսպորտային պատահարի հետևանքով, նշված պայմաններում Ա.Գյուրջյանի արարքում բացակայում են ինչպես ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածով, այնպես էլ ՀՀ քրեական օրենսգրքի 186-րդ հոդվածով նախատեսված հանցակազմերի հատկանիշները:

Վերոգրյալը հիմնավորվել է Աշոտ Գյուրջյանի բացատրությունով, նյութական վնասով ճանապարհատրանսպորտային պատահարի մասին արձանագրությունով: Գրնում եմ, որ Ա.Գյուրջյանի կողմից վարած «Նիսսան» մակնիշի 69 MQ 999 հերթական համարանիշի ավտոմեքենայով Նոր կյանք գյուղի կողմից դեպի Գինեվեր գյուղ փանոդ ավտոճանապարհին ոչխարի հոտի մեջ մխրճվելու, որի հետևանքով սատկել է 32 գլուխ մայր ոչխար, պարալիզացվել է 5 գլուխ ոչխար, նշված ոչխարներից 6 գլուխը եղել են հղի, պայմաններում Բ.Երանոսյանին և Ա.Մարտիրոսյանին ըստ Բ.Երանոսյանի ներկայացրած գույքային վնասի վերաբերյալ իրավահարաբերությունները կրում են քաղաքացիաիրավական բնույթ և ենթակա են լուծման դատական ճանապարհով (...)⁵:

9. Արարատի մարզի դատախազ Ա.Զիչոյանը 2020 թվականի օգոստոսի 21-ի որոշմամբ արձանագրել է, որ տեղի ունեցած ճանապարհատրանսպորտային պատահարի հետևանքով որևէ անձի անգգոշությամբ մարմնական վնասվածք չի պատճառվել: Այսինքն՝ նկարագրված պայմաններում Ա.Գյուրջյանի արարքում բացակայում են ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի հատկանիշները: Պարզվել է նաև, որ Ա.Գյուրջյանն իր ավտոմեքենայով դիտավորությամբ չի հարվածել ոչխարի հոտին և պատճառել 2.500.000 ՀՀ դրամի գույքային վնաս, այլ այդ վնասը պատճառվել է ճանապարհատրանսպորտային պատահարի հետևանքով, հետևաբար

⁵ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 21-23:

Ա.Գյուրջյանի արարքը չի կարող որակվել ՀՀ քրեական օրենսգրքի 186-րդ հոդվածով, երբ առկա է ճանապարհատրանսպորտային պատահար⁶:

10. Առաջին ատյանի դատարանն իր որոշմամբ փաստել է հետևյալը. «(...) «Ենթադրյալ հանցագործության բացակայության վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի հետևությունները չեն բխում դեպքի առթիվ իրականացված նախնական սրուգման արդյունքում ձեռք բերված փաստական տվյալներից և դրանք բավարար չեն հաստատելու, որ քրեական գործ հարուցելու հիմքերը բացակայում են ու առկա է քաղաքացիաիրավական վեճ: Քրեական գործը կարող է հարուցվել, եթե հաստատվել է հանցակազմի օբյեկտն ու օբյեկտիվ կողմը:

Դատարանն արձանագրում է, որ սույն գործով վարույթն իրականացնող մարմնի կողմից ձեռք բերված փաստական տվյալներով առերևույթ հաստատվում է ՀՀ քրեական օրենսգրքի 186-րդ հոդվածով նախատեսված հանցագործության օբյեկտի ու օբյեկտիվ կողմի մի շարք հատկանիշների առկայությունը: Հետևապես Դատարանը փաստում է, որ վարույթն իրականացնող մարմինը նյութերի նախապարասրման ընթացքում ձեռք է բերել քրեական դատավարության տվյալ փուլի համար ողջամրորեն անհրաժեշտ և բավարար փաստական տվյալներ քրեական գործ հարուցելու համար, ուստի հետաքննիչի՝ 2020թ. օգոստոսի 03-ի «Քրեական գործ հարուցելը մերժելու մասին» որոշման մեջ առկա եզրահանգումները չեն համապատասխանում նրա կողմից ձեռք բերված փաստական տվյալների ամբողջությանը:

Միաժամանակ Դատարանն արձանագրում է, որ թեև հետաքննության մարմնի կողմից կատարվել են մի շարք դատավարական գործողություններ, որոնց արդյունքում ձեռք են բերվել ողջամրորեն անհրաժեշտ և բավարար փաստական տվյալներ քրեական գործ հարուցելու համար, այնուամենայնիվ դրանց ուսումնասիրությունը թույլ չի տալիս փաստել, որ հետաքննիչը կատարել է քրեական դատավարության տվյալ փուլին բնորոշ բազմակողմանի և լրիվ քննություն:

⁶ Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 14-20:

Մասնավորապես, քրեական գործի հարուցման փուլում հետաքննիչ Ա.Սաղոյանի կողմից.

1) Միջոցներ չեն ձեռնարկվել բացի Բելլա Հրանտի Երանոսյանից, Արայիկ Հենրիկի Մարտիրոսյանից և Աշոտ Ավերիքի Գյուրջյանից այլ անձանցից ենթադրյալ դեպքի վերաբերյալ անհրաժեշտ փաստական տվյալներ ձեռք բերելու համար՝ հաշվի առնելով Աշոտ Ավերիքի Գյուրջյանի կողմից իր բացատրությամբ հայտնաձևած այն փաստական տվյալը, որ դեպքի վայրում եղել են նաև այլ անձինք (քաղաքացիներ և համագյուղացիներ):

2) Չի պարզվել արդյոք Աշոտ Ավերիքի Գյուրջյանը ենթադրաբար ունեցել է տեխնիկական հնարավորություն խուսափել տեղի ունեցած վթարից, հետևաբար՝ արդյոք տեղի ունեցած վթարի պատճառ են հանդիսացել հենց Աշոտ Ավերիքի Գյուրջյանի, թե մեկ այլ անձի գործողությունները, որոնց արդյունքում էլ Բելլա Հրանտի Երանոսյանին ենթադրաբար պատճառվել է գույքային վնաս:

3) Որևէ այլ աղբյուրից չի պարզվել ենթադրյալ դեպքի պահին անձրև տեղացել է, թե ոչ, նկատի ունենալով Աշոտ Ավերիքի Գյուրջյանի կողմից հայտնաձևած այն տվյալը, որ վթարի պահին տեղացել է ուժեղ անձրև, հետևապես ճանապարհը եղել է թաց, իսկ հետաքննիչի կողմից կազմված նյութական վնասով ճանապարհապարհանսպորտային պատահարի (ՃՏՊ) մասին արձանագրության համաձայն՝ ճանապարհը եղել է չոր:

4) Չի գնալվել Աշոտ Ավերիքի Գյուրջյանի վարած «Նիսսան» մակնիշի 69 MQ 999 հաշվառման համարանիշի ավտոմեքենան և չի ստուգվել նրա տեխնիկական վիճակը:

Դատարանը գրնում է, որ բազմակողմանի և լրիվ քննություն ապահովելու և քրեական գործ հարուցելու անհրաժեշտության մասին ողջամիտ կասկածները հերքելու պարտականության պայմաններում, հետաքննության մարմինը, ձեռք բերելով քրեական գործի հարուցման համար բավարար փաստական տվյալներ, պետք է հարուցեր քրեական գործ և միջոցներ ձեռնարկեր վերոնշյալ հարցերը լուծելու համար՝ այդպիսով նաև ապահովելով բազմակողմանի և լրիվ քննություն, փարատելով հնարավոր ողջամիտ կասկածները: Հետևապես Դատարանը գրնում է նաև, որ վերոշարադրյալ հանգամանքների պարզմամբ միայն հնարավոր է

հանգել վերջնական ճիշտ եզրահանգման՝ արդյոք Աշոտ Ավետիքի Գյուրջյանի կողմից ենթադրաբար կատարած արարքում առկա են ՀՀ քրեական օրենսգրքի 186-րդ հոդվածով նախատեսված հանցագործության բոլոր տարրերը, թե առկա է քաղաքացիաիրավական վեճ, որպիսի հանգամանքները բազմակողմանի և լրիվ ուսումնասիրելն ու գնահատելը հնարավոր է միայն քրեական գործի հարուցումից հետո ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ամբողջ գործիքակազմի կիրառմամբ՝ նպատակ ունենալով նաև իրացնել բազմակողմանի ու լրիվ քննության պարտականությունը, ինչն էլ հնարավորություն կտա վերացնել հնարավոր ողջամիտ կասկածները քրեական օրենսգրքով արգելված արարքի առկայության մասին, որպիսիք տվյալ դեպքում կարող են հերքել միայն հարուցված քրեական գործի շրջանակներում բազմակողմանի և լրիվ քննության միջոցով:

Դատարանը գտնում է, որ վերը նշվածի արդյունքում տեղի է ունեցել Բելլա Հրանտի Երանոսյանի ՀՀ քրեական դատավարության օրենսդրությամբ երաշխավորված գործի արդար քննության իրավունքի խախտում, որը հնարավոր կլինի վերականգնել միայն գործի բազմակողմանի և լրիվ քննությամբ:

(...)

Դատարանն արձանագրում է, որ հետաքննիչ Ա.Սաղոյանը «Քրեական գործ հարուցելը մերժելու մասին» որոշում կայացնելիս դուրս է եկել քրեական գործի հարուցման փուլի շրջանակներից և քննարկման առարկա է դարձրել այնպիսի հարցեր ու դրանց կապակցությամբ դիրքորոշման է հանգել այն պայմաններում, երբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ գլխում օրենսդիրը քրեական հետապնդման մարմիններին նման լիազորությամբ չի օժտել, այն է քրեական հետապնդում իրականացնելու կամ չիրականացնելու վերաբերյալ: Միաժամանակ, Դատարանն արձանագրում է, որ հակառակ մեկնաբանման դեպքում կարող է սրեղծվել իրավիճակ, որ քրեական գործ հարուցելու հետ միաժամանակ (նույն որոշմամբ) քրեական դատավարության սկզբնական այս փուլում քրեական հետապնդման մարմինները որոշեն իրականացնել քրեական հետապնդում, որպիսի խնդիրն էլ դուրս է քրեական գործի հարուցման փուլի խնդիրներից և որպիսի լիազորություն վերջիններս այս փուլում չունեն:

Հերևաբար, Դավարանը գրնում է, որ հերաքննիչ Ա.Սողոյանը չի պահպանել «Քրեական գործ հարուցելը» վերաառությունը կրող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ գլխում զեպեղված պահանջները՝ մասնավորապես՝ վերջինս, 2020թ. օգոստոսի 03-ին կայացնելով «Քրեական գործ հարուցելը մերժելու մասին» որոշումը, հանգել է այնպիսի հերկությունների, որոնք դուրս են ինդրո առարկա փուլի շրջանակներից, ինչով էլ խախտել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածի պահանջները, հերևաբար նաև օրինականության սկզբունքը:

(...)

Ամփոփելով վերոգրյալը՝ Դավարանը գրնում է, որ ներկայացված բողոքը պերք է բավարարել և ՀՀ ոսրիկանության ճանապարհային ոսրիկանության ՃՊԾ 2-րդ սպայական գումարակի 1-ին սպայական վաշրի ճանապարհարանսպորային պարահարների գործերով հերաքննության և վարչական վարույթի իրականացման խմբի րեսուչ Ա.Սողոյանի «Քրեական գործի հարուցումը մերժելու մասին» 2020թ. օգոստոսի 3-ի որոշումը պերք է վերացնել (...):»⁷:

11. Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Առաջին առյանի դատարանի որոշումը, արձանագրել է. «(...) Սույն որոշման նախորդ կերում վկայակոչված իրավադրությունների, դրանց վերլուծության արդյունքում արձանագրված դարողությունների լույսի ներքո գնահարելով սույն գործի նյութերը, դրանցում առկա փաստական րվյալները համադրելով Հերաքննիչի՝ սույն որոշման 2-րդ կերում մեջբերված փաստարկների ու եզրահանգումների հեր՝ Վերաքննիչ դարարանը հանգում է այն հերկության, որ վերացնելով Հերաքննիչի վիճարկվող որոշումը, Առաջին առյանի դարարանը պարշաճ գնահարականի է արժանացրել այն, որ Հերաքննիչի եզրահանգումները չեն համապարասխանում նրա կողմից ձեռք բերված փաստական րվյալների ամբողջությանը: Մասնավորապես՝ Վերաքննիչ դարարանն արձանագրում է նաև, որ հաղորդման մեջ իրականացված նախնական սրուգման արդյունքում ձեռք բերված փաստական րվյալներն ու րեղեկությունները բավարար չեն հավասարելու, որ քրեական գործ

⁷ Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 89-111:

հարուցելու օրինական հիմքը տվյալ դեպքում բացակայում է: Վերաքննիչ դատարանի գնահատմամբ՝ նախապատրաստված նյութերում առկա են այնպիսի փաստական տվյալներ, որպիսիք հիմք են տալիս ողջամիտ դատողություն անելու առ այն, որ հանցագործության հարկանիշների՝ մասնավորապես՝ գույքն անզգուշությամբ ոչնչացնելու կամ վնասելու առկայության վերաբերյալ ենթադրությունը կոնկրետ դեպքում օբյեկտիվորեն կրում է հավանական բնույթ:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանն իր համաձայնությունն է հայտնում Առաջին աստիճանի դատարանի այն եզրահանգմանը, որ քրեական գործի ելքը որոշելու հարցի ճիշտ լուծման համար առանցքային նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ չեն պարզվել և չեն գնահատվել:

Վերաքննիչ դատարանի գնահատմամբ՝ վերոնշյալի համադրված վերլուծությունն արդեն իսկ ողջամիտ կասկած է հարուցում առ այն, որ հանցագործության հարկանիշների, մասնավորապես՝ գույքն անզգուշությամբ ոչնչացնելու կամ վնասելու առկայության վերաբերյալ ենթադրությունը կոնկրետ դեպքում օբյեկտիվորեն կարող է կրել հավանական բնույթ:

Միաժամանակ Վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով, որ կոնկրետ դեպքում հանցագործության հարկանիշների առկայությունն օբյեկտիվորեն կարող է կրել հավանական բնույթ, գտնում է, որ դիմող Բելլա Երանոսյանի հաղորդմամբ բարձրացված խնդրո առարկա հարցերի առնչությամբ հիմնավոր հետևության հանգել տվյալ դեպքում հնարավոր էր հարուցված քրեական գործի շրջանակներում՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության ընթացքում: Այսինքն՝ տվյալ պարագայում ներկայացրած հաղորդմամբ նշված ենթադրյալ հանցագործությունների հարկանիշների առկայության վերաբերյալ կասկածը ենթակա է մեկնաբանման հոգուր լիարժեք քննության:

Արդյունքում, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ դիմող Բելլա Երանոսյանի հաղորդման հիման վրա քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման վերաբերյալ Առաջին աստիճանի դատարանի հետևությունն իրավաչափ է, և ենթադրյալ դեպքի հանգամանքները բազմակողմանի և լրիվ ուսումնասիրելն ու գնահատելը հնարավոր է միայն քրեական գործի հարուցումից հետո ՀՀ քրեական

դատավարության օրենսգրքով նախատեսված ամբողջ գործիքակազմի կիրառմամբ:

Ինչ վերաբերվում է Բողոքաբերի այն փաստարկին, որ Ա.Գյուրջյանի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու հարցին անդրադառնալով Հետաքննիչը դուրս չի եկել քրեական գործի հարուցման փուլի շրջանակներից, ապա Վերաքննիչ դատարանը՝ հաշվի առնելով Ա.Գյուրջյանի մասնակցությամբ տեղի ունեցած ճանապարհատրանսպորտային պատահարի փաստի առթիվ քրեական գործ հարուցելու անհրաժեշտության վերաբերյալ նախորդիվ բերված եզրահանգումները, գտնում է, որ բողոքաբերի վերոհիշյալ փաստարկին անդրադառնալն առարկայազուրկ է:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ դիմող Բելլա Երանոսյանի բողոքը բավարարելու մասին որոշում կայացնելիս Առաջին աստիճանի դատարանի կողմից թույլ չի տրվել դատական սխալ և գործով կայացվել է ճիշտ լուծող դատական ակտ, ուստի այն բեկանելու իրավաչափ հիմք չկա»⁸:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր են արդյոք քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2020 թվականի օգոստոսի 3-ի որոշումը վերացնելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

13. 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք) 185-րդ հոդվածի համաձայն՝ «1. Քրեական գործ հարուցելու առիթն անօրինական լինելու կամ հիմքերի բացակայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը որոշում են կայացնում քրեական գործ հարուցելը մերժելու մասին: (...)

5. Քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ բողոքի հիման վրա դատարանը վերացնում է բողոքարկվող որոշումը կամ հաստատում այն: Բողոքարկվող որոշման վերացումը պարտադիր է դարձնում դատախազի կողմից գործի հարուցումը»:

⁸ Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, թերթեր 68-77:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի համաձայն՝ «1. Հեղափոխության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից»:

Վճռաբեկ դատարանը Մանվել և Լիդա Հովհաննիսյանների գործով իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ. «(...) [Դ]ատարանը մինչդարձական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելու շրջանակներում ներկայացված բողոքը հիմնավորված ճանաչելու դեպքում իր դատական ակտում պետք է հստակ պարզաբանի՝

ա) վարույթն իրականացնող մարմնի կողմից քրեադատական օրենսդրության որ պահանջն է խախտվել և ինչում է այն դրսևորվել,

բ) դրա հետևանքով անձի որ իրավունքը կամ ազատությունն է խախտվել»⁹:

13.1. Մինևույն ժամանակ անդրադառնալով քրեական գործի հարուցման փուլի նկատմամբ դատական վերահսկողության սահմաններին՝ Վճռաբեկ դատարանը Միրվարդ Գևորգյանի գործով նշել է, որ պայմանավորված դատական վերահսկողության խնդիրներով՝ դրանք ընդգրկում են հետևյալ հարցադրումները.

«ա) արդյոք պահպանվել են «Քրեական գործ հարուցելը» վերաբերությունը կրող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ գլխում զետեղված պահանջները,

բ) արդյոք վիճարկվող որոշմամբ վարույթն իրականացնող մարմնի եզրահանգումները համապատասխանում են նրա կողմից ձեռք բերված տվյալների ամբողջությանը,

⁹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Մանվել և Լիդա Հովհաննիսյանների գործով 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ԱԲԱԴ/0001/11/14 որոշման 18-րդ կետը:

զ) արդյոք ձեռք են բերվել ողջամարտերն անհրաժեշտ տվյալներ քրեական գործ հարուցելու հարցի լուծման տեսանկյունից իրավական նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու համար,

դ) վեր հանված խախտումներն արդյոք հանգեցրել են անձի իրավունքների կամ օրինական շահերի խախտման»¹⁰:

14. ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. Ուրիշի գույքը դիտարկությամբ ոչնչացնելը կամ վնասելը, որը զգալի չափերի վնաս է պատճառել (...):»:

ՀՀ քրեական օրենսգրքի 186-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. Ուրիշի գույքն անզգուշությամբ ոչնչացնելը կամ վնասելը, որը խոշոր չափի վնաս է պատճառել (...):»:

ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1.Ավրոմոբիլի կամ մեխանիկական այլ տրանսպորտային միջոցի վարորդի կողմից ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որը մարդու առողջությանն անզգուշությամբ պատճառել է ծանր կամ միջին ծանրության վնաս: (...):»:

Մեջբերված նորմերի համակարգված վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածով պատասխանատվություն է նախատեսվում ճանապարհատրանսպորտային պատահարի արդյունքում մարդու առողջությանը կամ կյանքին վնաս պատճառելու համար, այլ կերպ՝ հետևանքները հանցակազմի պարտադիր հատկանիշ են և հստակ թվարկված են հոդվածի շրջանակներում: Այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասով պատասխանատվությունը վրա է հասնում մարդու առողջությանն անզգուշությամբ ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելու դեպքում, իսկ 2-րդ մասով՝ անզգուշությամբ մարդու մահ առաջացնելու դեպքում: Ակնհայտ է, որ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային

¹⁰ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Միրվարդ Գևորգյանի գործով 2017 թվականի օգոստոսի 30-ի թիվ ԼԴ/0018/11/16 որոշման 12-րդ կետը:

միջոցների շահագործման կանոնները խախտելու արդյունքում պատճառված գույքային վնասը որպես հանցակազմի հատկանիշ չի նկարագրվել, ինչից հետևում է, որ նշված պահանջները կամ կանոնները խախտելու հետևանքով գույքային վնաս պատճառած արարքները ՀՀ քրեական օրենսգրքով որպես հանցագործություն չեն նախատեսվել: Ուստի, կարելի է եզրահանգել, որ օրենսդիրը քրեաիրավական պաշտպանության տակ է վերցրել ճանապարհային երթևեկության կանոնները խախտելու արդյունքում անզգուշությամբ մեկ ուրիշի առողջությանն առնվազն միջին ծանրության վնաս, բայց ոչ երբեք գույքային վնաս պատճառելու դեպքերը (բացառությամբ, իհարկե, այն դեպքերի, երբ կոնկրետ գործի փաստական հանգամանքներով կհաստատվի, որ տրանսպորտային միջոցի վարորդի կողմից վերոնշյալ պահանջները կամ կանոնները խախտելու արդյունքում դիտավորությամբ է պատճառվել գույքային վնաս, որը պարունակում է ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշները):

Այս առումով հարկ է նկատել, որ ի տարբերություն ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի, ՀՀ քրեական օրենսգրքի 241-րդ, 245-248-րդ հոդվածներով նկարագրված հանցակազմերում որպես հետևանք նախատեսված է նաև խոշոր չափի վնասի պատճառումը, ինչը ևս մեկ անգամ վկայում է ճանապարհատրանսպորտային պատահարի արդյունքում գույքային վնասի պատճառումը չքրեականացնելու և դրա համար քրեական պատասխանատվություն չնախատեսելու օրենսդրի կամքի մասին: Մինչդեռ, նման դեպքերը ՀՀ քրեական օրենսգրքի 186-րդ հոդվածի տիրույթում դիտարկելու պարագայում ողջամտորեն կվտանգվի *«չկա հանցագործություն և պատիժ, եթե այն սահմանված չէ օրենքով»* (*nullum crimen, nulla poena sine lege*) հանրահայտ սկզբունքը, որից բխում է, որ արարքի հանցավորությունն ու պատժելիությունը պետք է նախատեսված լինեն իրավական որոշակիության չափանիշին բավարարող օրենքով և որ օրենքը չպետք է ի վնաս անձի տարածական մեկնաբանվի: Անձը չի կարող ենթարկվել քրեական պատասխանատվության և պատժի այլ կերպ, քան օրենքով ուղղակիորեն նախատեսված դեպքերում, կարգով և չափով: Վերոնշյալ կանոնը բացարձակ նշանակություն ունի մարդու իրավունքների պաշտպանության համակարգում և

իրավունքի գերակայության կարևորագույն տարր է, հետևաբար նշված սկզբունքից որևէ շեղումն անթույլատրելի է¹¹:

Վճռաբեկ դատարանը նաև արձանագրում է, որ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված և 2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքում (այսուհետ՝ նաև ՀՀ նոր քրեական օրենսգիրք) գույքն անզգուշությամբ ոչնչացնելու կամ վնասելու հանցակազմը ապաքրեականացվել է: Մասնավորապես, ՀՀ նոր քրեական օրենսգրքի 264-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում գույքը ոչնչացնելու կամ վնասելու համար՝ *«Ուրիշի գույքը ոչնչացնելը կամ վնասելը, որը խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել (...):»*: Իսկ, նույն օրենսգրքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Անզգուշությամբ կատարված արարքը հանցանք է, եթե սույն օրենսգրքի Հարուկ մասով դա նախատեսված է»*:

15. Քաղաքացիական իրավունքների ենթադրյալ խախտման դեպքերում քրեադատավարական կառուցակարգերի գործադրմամբ իրավական պաշտպանություն հայցելու հնարավորության կապակցությամբ Վճռաբեկ դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել այն մասին, որ քրեադատավարական ռեսուրսները չեն կարող օգտագործվել քաղաքացիական բնույթի իրավահարաբերությունները (վեճը) պարզելու և այդպիսի վեճի առարկան կազմող իրավաբանական փաստերը հաստատելու ուղղությամբ: Վերջինս պայմանավորված է համապատասխան փաստերը հաստատելու քաղաքացիադատավարական կանոնների՝ քրեադատավարական կանոններից սկզբունքային տարբերությամբ և դրանք մեկը մյուսով փոխարինելու անթույլատրելիությամբ:

Քրեադատավարական իրավահարաբերություններում իրավական պաշտպանություն հայցելու մեխանիզմները չեն կարող օգտագործվել այն դեպքերում, երբ պաշտպանության առարկան կազմող իրավահարաբերություններն իրենց բնույթով ենթակա են կարգավորման քաղաքացիական իրավանորմների գործադրման արդյունքում: Այլ կերպ՝ քրեադատավարական կառուցակարգերը, այդ

¹¹ Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Վարուժան Ավետիսյանի գործով 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ՍԴ3/0013/01/11, Դավիթ Մխիթյանի գործով 2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ԵԷԴ/0122/01/13, Վարդան Ղազարյանի գործով 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ԱՎԴ/0002/01/14 որոշումները:

թվում վերջնական որոշումների օրինականության նկատմամբ հետագա դատական վերահսկողությունը, չեն կարող կիրառվել քաղաքացիական իրավունքների ենթադրյալ խախտումները վերացնելու ուղղությամբ¹²:

15.1. Հիմք ընդունելով սույն որոշման 14-15-րդ կետերում մեջբերված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված հանցակազմի բացակայության պայմաններում ճանապարհատրանսպորտային պատահարի արդյունքում պատճառված գույքային վնասի հետ կապված հարցերը ենթակա են կարգավորման քաղաքացիական իրավահարաբերությունների տիրույթում: Հակառակ պարագայում յուրաքանչյուր ճանապարհատրանսպորտային պատահարի արդյունքում խոշոր չափի վնաս պատճառվելու դեպքում պետք է օգտագործվեն քրեադատավարական ռեսուրսները՝ քաղաքացիական բնույթի իրավահարաբերությունները (վեճը) պարզելու ուղղությամբ, ինչն անբույլատրելի է իրավական որոշակիության սկզբունքի տեսանկյունից: Նման մոտեցման պարագայում հիմնագուրկ կդառնան ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և ավտոտրանսպորտային միջոցների օգտագործման հետևանքով տուժած անձանց պատճառված վնասների հատուցումը սահմանող օրենքներով և իրավական այլ ակտերով նախատեսված դրույթները:

16. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- դիմող Բ.Երանոսյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ Ա.Գյուրջյանն իր կողմից վարած ավտոմեքենայով դիտավորությամբ չի հարվածել ոչխարի հոտին և Բ.Երանոսյանին պատճառել գույքային վնաս, այլ գույքային վնասը պատճառվել է ճանապարհատրանսպորտային պատահարի հետևանքով, հետևաբար Ա.Գյուրջյանի արարքում բացակայում են ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ և 186-րդ հոդվածներով նախատեսված հանցակազմերի հատկանիշները, և Բ.Երանոսյանին ու Ա.Մարտիրոսյանին պատճառված գույքային վնասի վերաբերյալ

¹² Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Լիա Ավետիսյանի* գործով 2011 թվականի փետրվարի 29-ի թիվ ԵԿԴ/0176/01/09 որոշման 30-րդ կետը, *Վարդան Մաթևոսյանի* գործով 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԵԿԴ/0037/01/11 որոշման 25-27-րդ կետերը, *Ռուդիկ Բալասանյանի* գործով 2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ԵԿԴ/0199/01/13 որոշման 17-րդ կետը, *Տարյանա Բելյավցևայի և Շահեն Գևորգյանի* գործով 2017 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ ԵԱԿԴ/0025/11/16 որոշման 12.1-րդ կետը:

հարաբերությունները կրում են քաղաքացիաիրավական բնույթ և ենթակա են լուծման դատական կարգով¹³,

- վերոնշյալ որոշման դեմ Բ.Երանոսյանի կողմից ներկայացված բողոքը դատախազի կողմից մերժվել է¹⁴,

- Առաջին ատյանի դատարանը դիմող Բ.Երանոսյանի բողոքը բավարարել է՝ փաստելով, որ սույն գործով վարույթն իրականացնող մարմնի կողմից ձեռք բերված փաստական տվյալներով առերևույթ հաստատվում է ՀՀ քրեական օրենսգրքի 186-րդ հոդվածով նախատեսված հանցագործության օբյեկտի ու օբյեկտիվ կողմի մի շարք հատկանիշների առկայությունը: Արդյունքում, Առաջին ատյանի դատարանն արձանագրել է, որ վարույթն իրականացնող մարմինը բազմակողմանի և լրիվ քննություն ապահովելու և քրեական գործ հարուցելու անհրաժեշտության մասին ողջամիտ կասկածները հերքելու պարտականության պայմաններում, միջոցներ չի ձեռնարկել մի շարք հարցեր պարզելու ուղղությամբ, ուստի խախտվել են Բ.Երանոսյանի ՀՀ քրեական դատավարության օրենսդրությամբ երաշխավորված գործի արդար քննության իրավունքը, ինչպես նաև օրինականության սկզբունքը, որը հնարավոր կլինի վերականգնել միայն գործի բազմակողմանի և լրիվ քննությամբ¹⁵,

- Վերաքննիչ դատարանն Առաջին ատյանի դատարանի դատական ակտը թողել է օրինական ուժի մեջ՝ արձանագրելով, որ գործը ճիշտ լուծելու համար առանցքային նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ չեն պարզվել: Արդյունքում, Վերաքննիչ դատարանը գտել է, որ Առաջին ատյանի դատարանի հետևությունն իրավաչափ է, և ենթադրյալ դեպքի հանգամանքները բազմակողմանի և լրիվ ուսումնասիրելն ու գնահատելը հնարավոր է միայն քրեական գործի հարուցումից հետո՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ամբողջ գործիքակազմի կիրառմամբ¹⁶:

17. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 13-15.1-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և

¹³ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

¹⁴ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

¹⁵ Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

¹⁶ Տե՛ս սույն որոշման 11-րդ կետը:

արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարաններն իրենց դատական ակտերում հստակ չեն պատճառաբանել, թե վարույթն իրականացնող մարմնի կողմից քրեադատավարական օրենսդրության պահանջների խախտումն ինչու է դրսևորվել և քրեական գործ հարուցելը մերժելու մասին 2020 թվականի օգոստոսի 3-ի որոշմամբ դիմող Բ.Երանոսյանի ո՞ր իրավունքները կամ ազատություններն են խախտվել:

Ավելին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին աստիճանի դատարանը՝ ներկայացված բողոքը բավարարելիս, իսկ Վերաքննիչ դատարանը՝ Առաջին աստիճանի դատարանի դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելիս, պատշաճ իրավական գնահատականի չեն արժանացրել Բ.Երանոսյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով ձեռք բերված տվյալները, որոնք հիմք են տալիս փաստելու, որ Ա.Գյուրջյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ, ինչպես նաև 185-րդ կամ 186-րդ հոդվածներով նախատեսված հանցագործության առերևույթ հատկանիշներ, այլ կերպ՝ քրեական գործ հարուցելու բավարար հիմքեր առկա չեն: Այսպես՝ նյութերի նախապատրաստման ընթացքում ձեռք բերված տվյալներով հիմնավորվել է, որ ճանապարհատրանսպորտային պատահարի արդյունքում որևէ անձի առողջությանն անզգուշությամբ մարմնական վնասվածք չի պատճառվել, հետևաբար Ա.Գյուրջյանի արարքում առերևույթ բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը: Բացի այդ, հիմնավորվել է նաև, որ Ա.Գյուրջյանն իր կողմից վարած ավտոմեքենայով գույքային վնասը դիտավորությամբ չի պատճառել, այլ վնասը պատճառվել է անզգուշությամբ՝ ճանապարհատրանսպորտային պատահարի հետևանքով, հետևաբար Ա.Գյուրջյանի արարքում առերևույթ բացակայում են նաև ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշները: Նման պայմաններում կատարվածը ՀՀ քրեական օրենսգրքի 186-րդ հոդվածի տիրույթում դիտարկելու պարագայում կվտանգվի *«չկա հանցագործություն և պատիժ, եթե այն սահմանված չէ օրենքով» (nullum crimen, nulla poena sine lege)* սկզբունքը, որից բխում է, որ արարքի հանցավորությունն ու պատժելիությունը պետք է նախատեսված

լինեն իրավական որոշակիության չափանիշին բավարարող օրենքով և որ օրենքը չպետք է ի վնաս անձի տարածական մեկնաբանվի:

Ուստի, Վճռաբեկ դատարանի համար ընդունելի են բողոքաբերի այն փաստարկները, որ վիճարկվող որոշման դեմ ներկայացված բողոքով հայցվող իրավական պաշտպանության առարկան քաղաքացիական իրավանորմների գործադրմամբ լուծման ենթակա հարցեր են, որոնք վերաբերում են Բ.Երանոսյանի և Ա.Գյուրջյանի միջև առկա քաղաքացիաիրավական հարաբերություններին, հետևաբար վարույթն իրականացնող մարմնի կողմից Բ.Երանոսյանի հաղորդման առթիվ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն իրականացրած չլինելու և դիմող Բ.Երանոսյանի իրավունքների խախտում թույլ տված լինելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր չեն: Վճռաբեկ դատարանը փաստում է նաև, որ ստորադաս դատարանների դատական ակտերում վկայակոչված հանգամանքների պարզումը (տեղի ունեցած վթարի պատճառները չպարզելը, ենթադրյալ դեպքի պահին անձրև տեղալու հանգամանքը չպարզելը, Ա.Գյուրջյանի վարած ավտոմեքենայի տեխնիկական վիճակի չստուգելը, բացի Բ.Երանոսյանից, Ա.Մարտիրոսյանից և Ա.Գյուրջյանից այլ անձանցից ենթադրյալ դեպքի վերաբերյալ անհրաժեշտ փաստական տվյալներ ձեռք չբերելը), իրավահարաբերության՝ քաղաքացիաիրավական բնույթի լինելու պայմաններում, գործի համար էական նշանակություն ունենալ չէր կարող:

18. Վերոշարադրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2020 թվականի օգոստոսի 3-ի որոշումը վերացնելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր չեն:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Բ.Երանոսյանի հաղորդման հիման վրա քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման օրինականության ու հիմնավորվածության ստուգման ընթացքում ստորադաս դատարանների կողմից թույլ են տրվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ և 358-րդ հոդվածների պահանջների խախտումներ, որոնք իրենց բնույթով էական են, և համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի՝ հիմք են Առաջին աստիճանի և Վերաքննիչ դատարանների դատական ակտերը բեկանելու և

փոփոխելու համար: Միննույն ժամանակ, հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դիմող Բ.Երանոսյանի բողոքը պետք է մերժել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ, 43-րդ, 361¹-րդ, 403-406-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Դիմող Բելլա Երանոսյանի բողոքի վերաբերյալ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի մարտի 3-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի սեպտեմբերի 29-ի որոշումը բեկանել ու փոփոխել: Դիմող Բելլա Երանոսյանի բողոքը մերժել:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ

_____ Ս.ՕՀԱՆՅԱՆ